

Տեղական
ՀՀ Սյունիքի մարզի համայնքներում 2013 թվականին իրականացված վարչական
հսկողության արդյունքների մասին

ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 28.12.2012 թվականի «Վարչական հսկողության 2013 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» N 190-Ա հրամանի համաձայն ՀՀ Սյունիքի մարզում նախատեսվել էր հսկողություն իրականացնել 36 համայնքներում:

Համայնքներում իրականացված հսկողության արդյունքում հայտնաբերվել են հետևյալ հիմնական խախտումները.

Չի իրականացվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված (համայնքի ղեկավարի ներկայացմամբ համայնքի ավագանին որոշում է կամավոր լիազորությունների իրականացման կարգը և անհրաժեշտ ֆինանսական միջոցները) բոլոր 36 համայնքներում (Ագարակ, Աղվանի, Անտառաշատ, Գեղի, Նոր Աստղաբերդ, Գորայք, Բարձրավան, Որոտան(Գորիսի տար.) Ներքին Խնձորեսկ, Լեռնաձոր, Չափնի, Սևաքար,Հալիձոր, Վերիշեն, Տանձատափ, Քարաշեն, Աշոտավան,Թասիկ, Ներքին Հանդ, Ծավ, Տանձավեր, Օխտար, Նորավան, Որոտան (Սիսիանի տար.), Վաղատին, Կարճևան, Նոնաձոր, Տոլրոս, Սպանդարյան, Լծեն, Վահրավար, Տաշտուն,Վարդանիձոր, Հարժիս, Խնածախ, Քարահունջ):

Թերություններով են կատարվել «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի պահանջները մարզի 18 համայնքներում (Որոտան(Գորիսի տար.) Վերիշեն, Քարաշեն, Աշոտավան,Թասիկ, Ծավ, Նորավան, Որոտան (Սիսիանի տար.), Վաղատին, Կարճևան, Տոլրոս, Սպանդարյան, Լծեն, Տաշտուն,Վարդանիձոր, Հարժիս, Խնածախ, Քարահունջ), իսկ մյուս համայնքներում առևտրի, հանրային սննդի եւ կենցաղային ծառայությունների բացակայության պատճառով նշված լիազորությունները չեն իրականացվել:

Պատշաճ չեն կատարվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1.1-րդ հոդվածի պահանջները (համայնքի ղեկավարը անհատական ակտեր ընդունելուց հետո երկօրյա ժամկետում համայնքի ավագանու անդամներին է ուղարկում և

համայնքի ավագանու նստավայրում՝ բոլորի համար տեսանելի տեղում փակցնում) մարզի 18 համայնքներում (Աղվանի, Անտառաշատ, Գեղի, Նոր Աստղաբերդ, Բարձրավան, Որոտան(Գորիսի տար.) Ներքին Խնձորեսկ, Չափնի, Սևաքար, Ներքին Հանդ, Ծավ, Վաղատին, Նոնաձոր, Սպանդարյան, Լծեն, Վահրավար, Հարժիս, Խնածախ):

ՀՀ կառավարության 11.07.2002 թ N1146-Ն որոշմամբ սահմանված կարգի (իրավական ակտերի հաշվառում) խախտումներ են թույլ տրվել մարզի 22 համայնքներում (Աղվանի, Անտառաշատ, Գեղի, Նոր Աստղաբերդ, Բարձրավան, Սևաքար, Տանձատափ, Քարաշեն, Թասիկ, Ներքին Հանդ, Տանձավեր, Օխտար, Որոտան (Սիսիանի տար.), Նոնաձոր, Տոլրոս, Սպանդարյան, Լծեն, Վահրավար, Տաշտուն, Վարդանիձոր, Հարժիս, Խնածախ):

ՀՀ տարածքային կառավարման նախարարի 7.11.2006թ N20-Ն հրամանով հաստատված կարգի խախտումներ են արձանագրվել համայնքների ղեկավարների աշխատակազմերում վարվող համայնքային ծառայողների անձնական գործերում մարզի 35 համայնքներում:

Չեն ապահովվել ՀՀ կառավարման նախարարի 29.08.2006թ N12-Ն հրամանով սահմանված կարգի 5-րդ կետի պահանջները (20-օրյա ժամկետում չեն հրավիրվել մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգային նիստեր) 16 համայնքներում (Աղվանի, Գեղի, Բարձրավան, Սևաքար, Տանձատափ, Քարաշեն, Թասիկ, Ներքին Հանդ, , Տանձավեր, Օխտար, Նորավան, Որոտան (Սիսիանի տար.), Վաղատին, Նոնաձոր, Լծեն, Վահրավար, Հարժիս):

Պատշաճ չի ապահովվել ՀՀ տարածքային կառավարման նախարարի 19.01.2009թ N03-Ն հրամանով հաստատված կարգը (աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգի ծանուցումը աշխատակազմի բոլոր անդամներին) մարզի 17 համայնքներում (Առաջաձոր, Շրվենանց, Ձորաստան, Դարբաս, Լոր, Գետաթաղ, Աղիտու, Խոզնավար, Խոտ, Դավիթբեկ, Շաքի, Սառնակունք, Ծղուկ, Շաղաթ, Կաղնուտ, Նժդեհ, Տորունիք):

ՀՀ կառավարության 21.01.1988թ. N 812 (ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրման կարգ), 02.02.2002թ N 91 (շինարարության /քանդման / թույլտվության կարգ) և 06.05.2003 թ N 626-Ն (շինարարության փաստագրման ավարտական ակտի տրման կարգ) որոշումների պահանջների խախտումներ են թույլ տրվել 2 համայնքներում (Նոնաձոր, Խնածախ):

Չեն իրականացվում <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 71-րդ, 14-րդ, 28-րդ կետերով, 37-րդ հոդվածի 2-րդ կետով, 38-րդ հոդվածի 3-րդ կետով, 39-րդ հոդվածի 1-ին, 2-րդ կետերով, 32-րդ հոդվածի 7-րդ, 10-րդ (<< կամ այլ պետությունների համայնքների հետ համագործակցության մասին պայմանագրերի կնքման մասով), 11-րդ 13-րդ, 19-րդ կետերով, 33-րդ հոդվածի 2-րդ կետով, 40-րդ հոդվածի 2-րդ, 4-րդ, 5-րդ կետերով սահմանված լիազորությունները մարզի 36 գյուղական համայնքներում՝ դրանց իրականացման անհրաժեշտության, կամ օրենքով սահմանված լիազորությունների իրականացման կարգերի բացակայության պատճառով: